Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ԽՍՀՄ ՊԱՋԸԱՎԻԱՔԻՄԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՋԸԱՎԻԱՔԻՄԻ ԲՋԻՋԻ

355(47)
Դ-24

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ

MAR 2010

ԽՍՀՄ ՊԱՇԸԱՎԻԱՔԻՄԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

355(ԱՊ)
Պ-24

ՊԱՇԸԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՐԱՆՆ Է

Հաստատվում է
ԽՍՀՄ Պաշըավիաքիմի ԿԽ
Նախագահի նիստում
20—V—32 թ.

780
37

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՇԸԱՎԻԱՔԻՄԻ ԲՋԻՋԻ

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1932

26 FEB 2014

40.861

Սրբագրեց՝ Գառ. Հակոբյան

Պետհրատի տպարան Երևան

Գլավլիտ 8953 (բ) Պատվեր 3267 Տիրաժ 2500

Հանձնված է արտադրության 21 նոյեմբերի 1932 թ
Ստորագրված է տպագրելու 15 դեկտեմբերի 1932 թ.

# ԽՍՀՄ ՊԱՋԸԱՎԻԱՔԻՄԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԲՋԻՋԻ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Պաջըավիաքիմի բջիջը հանդիսանում է Պաջը-Ավիաքիմի ամբողջ սիստեմի հիմնական օղակը։

2. Բջիջները կազմակերպվում են արտադրական հատկանիշի համեմատ՝ գործարանի և ֆաբրիկայի ցեխերում կամ հերթափոխերում, Մոտորատրակտորային կայանների ցեխերում և արտադրական տեղամասերում, խորհտնտեսությունների բաժանմունքներում, կոլտնտեսությունների բրիգադներում, յերկաթուղային ու ջրային տրանսպորտում, դպրոցական հիմնարկներում, ԲԳԿԲ զորամասերում, հիմնարկություններում։ Առանձին դեպքերում Պաջըավիաքիմի բջիջները կազմակերպվում են նաև տերիտորիալ հատկանիշով (բնակվարձկալ ընկերություն և այլն)։

3. Բջիջն աշխատում է Ընկերության Կանոնադրության, վերադաս օրգանների վորոշումների ու ցուցումների և բջիջի անդամների ընդհանուր ժողովների վորոշումների հիման վրա։

### II. ԲՋԻՋԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բջիջի հիմնական խնդիրն է՝ կազմակերպել յերկրի պաշտպանությանը հասարակական աջակցության ցույց տալու գործը, ուժեղացնել Կարմիր բա-

նակի, Օդային ու Ծովային նավատորմի մարտական ու տեխնիկական հզորությունը, ԽՍՀՄ-ի ավիացիոն ու քիմիական շինարարությունը։

Այդ խնդիրը լուծելու համար բջիջը—ԽՍՀՄ-ի վրա իմպերիալիստների ռազմական հարձակման վտանգի շուրջը աշխատավորների մեջ լայնորեն ծավալած և սիստեմատիկորեն տարվող բացատրական աշխատանքի հիման վրա և հենվելով քաղաքի ու գյուղի աշխատավորների լայն մասսաների պատրաստակամության վրա՝ ակտիվորեն աջակցելու պրոլետարական դիկտատուրայի երկրի պաշտպանության հզորությունն ամրապնդելու գործին—կազմակերպում և անց է կացնում հետևյալ աշխատանքը·

ա) հավաքագրում է աշխատավորներին Պաշտավիաքիմի Ընկերության անդամության մեջ·

բ) անց է կացնում և ապահովում է աշխատավորների ռազմական պարտականության վորակապես բարձր գործնական աշխատանքը զանազան մասնագիտությունների՝ հակօդային պաշտպանության (ՀՕՊ), քիմպաշտպանության, ավիացիայի վերաբերյալ· անց է կացնում ռազմատեխնիկական պրոպագանդը, աջակցում է պաշտպանության համար նշանակություն ունեցող բանվորական գյուտարարությանը·

գ) մասնակցում է ձեռնարկությունների կողմից ԲԳԿԲ զորամասերում տարվող ռազմաշեֆական աշխատանքին· ակտիվորեն աջակցում է ԲԳԿԲ զորակոչերը, հավաքները, մանյովրները և միջհավաքային աշխատանքն անցկացնելու գործին· մասնակցում է ԲԳԿԲ, Օդային ու Ծովային նավատորմի, ռազմական դպրոցների կոմպլեկտավորմանը (համալրմանը) և դրանց համար կադրերի պատրաստմանը·



դ) ակտիվորեն մասնակցում է սոցմրցակցության ու հարվածայնության սկզբունքներով արդֆինպլանի կատարմանը, առաջին հերթին՝ ավիացիոն, քիմիական, ռազմական արդյունաբերության ձեռնարկություններում ու տրանսպորտում, նույնպես և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը·

ե) սնուցանում, պատրաստում և վերապատրաստում է Ընկերության կադրերը՝ բջիջների մեջ և Ընկերության վերադաս օրգաններում աշխատելու համար·

զ) անց է կացնում անդամավճարների և պաշտպանության ամրապնդման համար դրամական միջոցների հավաքումը, իրացնում է Ընկերության վիճակախաղի տոմսերը·

է) ապահովում է ուսումնական գույքի պահելը, խնամելը, ամենաճիշտ ոգտագործումը։

5) Բջիջի աշխատանքը կառուցվում է·

ա) կուսակցության գլխավոր գիծն անշեղորեն անցկացնելու և Ընկերության աշխատանքի ընթացքում օպորտունիզմի արտահայտությունների և, առաջին հերթին, ռազմական վտանգի աջ օպորտունիստական թերագնահատման դեմ, նույնպես և «ձախ» թեքումների դեմ վճռական պայքար մղելու հիման վրա· հեղափոխական աչալրջության և Ընկերության շարքերում դասակարգային մաքրության պահպանելու հիման վրա· անդամների մասսաների իսկական ինքնաքննադատության և քաղաքական ակտիվության բարձրացման հիման վրա՝ նրանց մեջ միջազգային պրոլետարական համերաշխության գիտակցության և պրոլետարական հեղափոխության ու սոցիալիզմի համար տոկուն մարտիկի բարձր հատկություններ դաստիարակելու միջոցով·

բ) բջիջի կազմակերպչական ամրապնդման և նրա

աշխատանքի վորակի բարելավման հիման վրա՝ ընկ. Ստալինի 6 պայմանների կատարման (պայքար ինքնահոսի ու դիմազրկության դեմ, աշխատանքի պլանայնության ապահովում, կատարած աշխատանքի անհատական պատասխանատվության բարձրացում) և սոցմրցակցության ու հարվածայնության լայն ծավալման հիման վրա.

գ) Ընկերության շարքերում հասարակայնության ու կամավորության ամենամեծ զարգացման հիման վրա. անդամների մասսաների մեջ դեպի իրենց պարտականությունները ու դեպի Պաշքավիաքիմի անդամի կոչումը գիտակից վերաբերմունք դաստիարակելու և հասարակական կարգապահությունն ամեն կերպ ամրապնդելու հիման վրա.

դ) ընդունված վորոշումների պարտադիր կերպով դրված հսկողության և կատարման վերստուգման հիման վրա:

## III. ԲՋՋԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Պաշքավիաքիմի բջիջը կազմակերպվում է Ընկերության առնվազն 10 անդամ յեղած ժամանակ:

Ծանոթություն.— Յեթե Ընկերության անդամների թիվը 10-ից պակաս է, դրանք կցվում են Պաշքավիաքիմի ամենամոտիկ բջիջին:

7. Բջիջը կարելի յե կազմակերպել աշխատավորների նախաձեռնությամբ, նախորոք պայմանավորվելով, և Պաշքավիաքիմի վերադաս խորհրդի հետագա հաստատությամբ:

Առաջին (կազմակերպչական ժողովն անց է կացնում Պաշքավիաքիմի վերադաս խորհրդի ներկայացուցիչը կամ լիազորը:



8. Բջիջի բարձրագույն ղեկավար որգանն է բջիջի անդամների ընդհանուր ժողովը կամ կոնֆերանսը:

Բջիջի ընդհանուր ժողովը կատարում է նախագահության, բջիջի նախագահի և վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները. քննություն է առնում և հաստատում է նախագահության ու վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները. քննում և հաստատում է բջիջի աշխատանքների պլանը և նախահաշիվը. կնքում է պայմանագրեր՝ սոցմրցակցության և այլն:

Բջիջի ընդհանուր ժողովը (կոնֆերանսը) հրավիրվում է նախագահության կողմից, առնվազն 3 ամիսը 1 անգամ:

Ծանոթություն.— Բջիջի անդամների ընդհանուր ժողովը համարվում է որինական՝ բջիջի անդամների առնվազն $1/3$ մասի ներկա յեղած ժամանակ, իսկ կոնֆերանսը համարվում է որինական՝ կոնֆերանսի համար ընտրված պատգամավորների առնվազն $2/3$-ի առկա յեղած ժամանակ:

9. Բջիջի ընդհանուր ժողովների միջև յեղած ժամանակաշրջանում ամբողջ գործունեության ղեկավարությունը, պլանավորումը և վերստուգումը իրականացնում է նախագահությունը, վոր ընտրվում է բջիջի ընդհանուր ժողովի կողմից, 3 անդամի կազմով—Ընկերության 10 անդամ յեղած ժամանակ. 5 անդամի կազմով— Ընկերության 25 անդամից ավելի յեղած ժամանակ. 7 անդամի կազմով— Ընկերության 50 անդամից ավելի յեղած ժամանակ: Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է 3 անդամի կազմով:

Նախագահությունն ու վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում են 1 տարի ժամանակով:

Ծանոթություն.— *Նախագահության կամ վերստուգիչ հանձնաժողովի անաշխատունակության դեպքում, նրանք կարող են վերընտրվել վերադաս խորհրդի թույլտվությամբ, նրանց լիազորությունների սահմանված ժամկետը լրանալուց առաջ. Նախագահության կամ վերստուգիչ հանձնաժողովի առանձին անդամների անաշխատունակության դեպքում կիրառվում է հետկանչելու իրավունքը:*

10. *Բջիջի նախագահությունը, սույն «Կանոնադրության» II հատվածի համաձայն, անց է կացնում հետևյալ աշխատանքը.*

*ա) կիրառում է կյանքում վերադաս կազմակերպությունների դիրեկտիվները և բջիջի ընդհանուր ժողովի վորոշումները.*

*բ) մշակում է բջիջի աշխատանքի պլանը և նախահաշիվը, ներկայացնելով դրանք ընդհանուր ժողովի հաստատությանը.*

*գ) ղեկավարում է ընկերության անդամների հավաքագրումը և բջիջի անդամների ճիշտ հաշվառումը է կատարում.*

*դ) կատարում է կադրերի ճիշտ դասավորումը և նրանց պատրաստությունը, ապահովելով յուրաքանչյուր ընկերոջ անհատական պատասխանատվությունը՝ նրանց հանձնած աշխատանքի բնագավառի համար, և դիմազրկության վճռական վերացումը.*

*ե) ղեկավարում է սեկտորների աշխատանքները (սակավաթիվ բջիջներում ակտիվիստների աշխատանքը, վորոնք պատասխանատու յեն վորոշ բնագավառների համար) և խմբակների կազմակերպիչների աշխատանքը.*



*զ) ղեկավարում է բջիջի գործնական կազմակերպությունները (խմբակները, ռազմական անկյունները, տիրերը և այլն), ապահովում է վարժական կայանի կոմպլեկտավորումը (համալրումը), հավաքագրումը, բջիջի անդամների հաճախման կանոնավորությունը և ոգնում է վարժական կայանին՝ ուսուցումն անցնողների մեջ կարգապահությունը պատշաճ բարձրության վրա դնելու գործում.*

*է) տալիս է անդամատոմսերը, տարածում է վիճակախաղի տոմսերը. հավաքում է մուտքի վճարները և անդամավճարները, նվիրատվությունները և այլ մուտքերը, ապահովելով գույքի, հատկապես զենքի ճիշտ հաշվառումն ու կանոնավոր ոգտագործումը, և զենքի խնամելն ու պահելը.*

*ը) բջիջի ամբողջ աշխատանքի հաշվառում է կատարում և իր գործունեության մասին հաշվետվություն է տալիս վերադաս որգաններին ու բջիջի անդամներին և նախապատրաստում է այն հարցերը, վոր ներկայացվում են ընդհանուր ժողովի (կոնֆերանսի) քննությանը.*

*թ) իրականացնում է բջիջի աշխատանքի պլանի կատարման ընթացքի ստուգումն ու վերստուգումը:*

11. *Նախագահությունն իր կազմից ընտրում է մեկ քարտուղար, մեկ գանձապետ ու նախագահության անդամների կամ ակտիվի կազմից նշանակում է սեկտորների ղեկավարներ:*

*Նախագահության նիստերը տեղի յեն ունենում առնվազն ամիսը յերեք անգամ:*

12. *Բջիջի առորյա գործունեության ղեկավարությունը դրվում է բջիջի նախագահի վրա:*

13. *Բջիջի նախագահությանը կից ստեղծվում են հետևյալ սեկտորները.*

*ա)* Կազմակերպչական— *կազմում է աշխատանքի պլանները, ապահովում է ընկերության անդամների հավաքագրումն ու հաշվառումը, աշխատանք է տանում ստորին կադրեր ջոկելու, ամրապնդելու, պատրաստելու և ղեկավար աշխատանքի առաջ քաշելու համար. կազմակերպում է ամբողջ աշխատանքի հաշվառումն ու փորձի փոխանակումը. կազմում է հաշվետվություններ և ինֆորմացիոն ամփոփումներ. ապահովում է պաշտպանության աշխատանքի միասնական պլանն անցկացնելը ձեռնարկության, խորհտնտեսության մեջ և այլն.*

*բ)* Ագիտմասսայական— *բացատրում է ընկերության խնդիրները, անց է կացնում ագիտացիոն աշխատանքը՝ բջիջի գործնական կազմակերպությունների գործունեության և վարժական կայանի աշխատանքի շուրջը. ապահովում է սոցմրցակցության ու հարվածայնության զարգացումն ու հաշվառումը՝ Պաշտավիաքիմի անդամների մեջ ընկերության կողմից տարվող պաշտպանության աշխատանքի վերաբերյալ և արտադրության մեջ. ղեկավարում է Պաշտավիաքիմի անկյան, ագիտասայլակների, խմբակային ագիտատորների աշխատանքները, ապահովում է Պաշտավիաքիմի խնդիրների մասսայական ագիտացիան ու պրոպագանդը՝ կուլտլուսավորական կազմակերպությունների միջոցով, օգտագործում է՝ կինոն, ռադիոն, ակումբների բեմադրական, գրադարանների ցուցադրական աշխատանքները և պատի թերթերը.*

*գ)* Մարտական պատրաստության— *կազմակերպում է ռազմադպրոցական ստորաբաժանումներն ու*



*խմբակները՝ մարտական պատրաստության զանազան մասնագիտությունների վերաբերյալ. կատարում է կազմակերպության անդամների հավաքագրումը, զտումը և վարժակայաններ ուղարկելը, վերստուգում է կազմակերպության անդամների կողմից վարժակայանների հաճախումը. անց է կացնում կարճատև կուրսեր (խմբակներ)՝ պահեստի սպակազմի տակտիկական ու ռազմատեխնիկական վորակավորման բարձրացման համար. անց է կացնում հրաձգային պատրաստություն. պատասխանատու յե զենքի և վարժական-նյութական գույքի հաշվառման, խնամելու և պահելու համար և այլն.*

*դ)* ՀՕՊ-ի և քիմիայի— *օգնում է ՀՕՊ-ի օրգաններին նրանց կողմից տարվող աշխատանքի ընթացքում. վերացնում է անգրագիտությունը ՀՕՊ-ի և ռազմական քիմիայի վերաբերյալ, մանավանդ սահմանամերձ ռայոններում և արդյունաբերական կարևոր կենտրոններում, յերկաթուղային հանգույցներում և այլն. կազմակերպում է Օդային դիտողության, հաղորդման ու կապի (ՕԴՀԿ) խմբեր ու պոստեր և ՀՕՊ-ի այլ անհրաժեշտ կազմությունները. կազմակերպում է ակումբներում, խրճիթ ընթերցարաններում ՀՕՊ-ի, քիմիական անկյուններ և այլն.*

*ե)* Կանանց մեջ տարվելիք աշխատանքի— *ժողովում է կանանց ակտիվը, պլանավորում է կանանց մեջ տարվող աշխատանքը, կազմակերպում է կանանց ներգրավումը և ապահովում է նրանց մեջ աշխատանք անցկացնելը բջիջի բոլոր սեկտորների և գործնական կազմակերպությունների կողմից. ապահովում է ամենա-*

լավ ակտիվ աշխատող կանանց առաջքաշումը՝ ընկերության մեջ ղեկավար աշխատանքի համար:

Արտադրական բջիջի՝ մանուկների մեջ տարվելիք աշխատանքի— կազմակերպչորեն և մեթոդապես օգնում է կոմյերիտական բջիջին ու պիոներ-ջոկատին, նույնպես և յոթնաշեֆ դպրոցին՝ ռազմական աշխատանքը «Պաշջրավիաքիմի պատանի բարեկամների» և դպրոցականների մեջ կանոնավոր կերպով դնելու գործում, առաջին հերթին՝ նրանց ապահովելով խմբակների ղեկավարների և մասսայիկ-կազմակերպիչների վորակյալ կադրերով, մեթոդական ցուցումներով՝ ռազմական աշխատանքի առանձին ճյուղեր դնելու վերաբերյալ, և իրականացնում է մանուկների հետ տարվող ամբողջ ռազմական աշխատանքի վերստուգումը: Արտադրական բջիջի մանուկների սեկտորի վրա դրվում է նաև «Պաշջրավիաքիմի պատանի բարեկամների» ընդհանուր հաշվառումը: Դպրոցական բջիջի մանուկների մեջ տարվելիք աշխատանքի սեկտորի խնդիրն է՝ օգնել պիոներ-ջոկատին և աշկոմին՝ դպրոցում մանուկների հետ տարվելիք ռազմական աշխատանքը կազմակերպելու՝ թե խմբակային և թե արտադպրոցական ակումբային աշխատանքի ձևերով:

գ) Տնտեսական-ֆինանսական— ապահովում է անդամավճարները 100 տոկոսով հավաքելը. մշակում է տնտեսական-ֆինանսական պլանը, միջոցներ է գտնում գործնական աշխատանքի համար. կազմակերպում է նյութական հատկացումների, շաբաթօրյակների, վճարովի յերեկույթների անցկացնելը, անց է կացնում հատուկ նշանակում ունեցող միջոցների հավաքումը (զինիմաբաշխություն պաշտպանության ֆոնդ և այլն), տարածում է վիճակախաղի տոմսերը. ապահովում է (սույն «Կանոնադրության» 29 կ. համաձայն) Պաշջրավիաքիմի վերադաս խորհրդին միջոցների փոխադրությունը կամ հանձնումը, տանում է հաշվետվությունը, ապահովում է բջիջի գործնական կազմակերպությունների ուսումնական պիտույքներ ու գույք մատակարարելը, դրանց հաշվառում է կատարում և հսկում է դրանց լավ պահելուն. ապահովում է տնտեսական հաշվարկի և խնայողության ռեժիմի անցկացնելը.

է) կատարման ստուգման— անց է կացնում նախագահության ու վերադաս կազմակերպությունների վորոշման հսկողությունն ու կատարման ստուգումը, կապ է պահպանում վերստուգիչ հանձնաժողովի հետ և այլն.

ը) քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում պարտադիր կարգով ստեղծվում են քիմիական սեկտորներ. ավիացիոն արդյունաբերության գործարաններում— ավիացիոն սեկտորներ. ծովերի, նավարկելի գետերի և լճերի յեզերքին տեղավորված խոշոր ձեռնարկություններում— ռազմածովային սեկտորներ:

Ծանոթություն.— 1

տոր պարտավոր է կազմակերպել իր աշխատանքը և դրա հաշվառում կատարել. խորհրդի աշխատանքի ընդհանուր միացյալ հաշվառման կազմելն ընկնում է կազմակերպչական սեկտորի վրա:

2. Սակավաթիվ բջիջներում սեկտորները չեն ստեղծվում, այլ ընտրվում են լիազորներ՝ աշխատանքի առանձին ամենակարևոր բնագավառների համար:

14. Սեկտորի գլուխ է կանգնած ղեկավարը, վոր նշանակվում է բջիջի նախագահության կողմից և աշխատում է առանց արտադրությունից կտրվելու: Սեկտորի ղեկավարը ժողովում է ակտիվը, նրա մեջ բաշխում է սեկտորի աշխատանքը, հաշվի յե առնում և ստուգում է յուրաքանչյուր ակտիվիստի աշխատանքը և անձամբ պատասխանատվություն է կրում նրան հանձնած աշխատանքի բնագավառի համար:

15. Բջիջի նախագահությանը կից պարբերաբար խորհրդակցություն է հրավիրում՝ պաշտպանության աշխատանքի միասնական պլանն անցկացնելու համար ձեռնարկություններում, խորհտնտեսության մեջ Մոտորատրակտորային կայանում և այլն, վորի կազմի մեջ մտնում են սեկտորների ղեկավարները և տնտեսական օրգանի ու բոլոր այն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, վորոնք կապված են ձեռնարկության մեջ ռազմական աշխատանքն անցկացնելու հետ: Խորհրդակցությունը մշակում է պաշտպանության աշխատանքի միասնական պլանը (բովանդակությունը, աշխատանքի որացույցը, առաջադրությունների, շենքերի բաշխումը և այլն) և ապահովում է նրա կատարման հետագա ստուգումն ու փորձի հաշվառումը:

16. Լիազորությունների ժամկետն անցնելուց հետո, կամ թե այս կամ այն ղեկավար աշխատավորների փոխվելու կապակցությամբ, փոխվողը պարտավոր է լրիվին հանձնել բջիջի բոլոր գործերը, գույքը և միջոցները նոր ընտրված կամ նշանակված աշխատավորին:



## IV. ԽՄԲԱԿ ՈՒ ԽՄԲԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

17. Ստորին արտադրական ողակներում (խմբակ, զադգյահ, ագրեգատ և այլն) ստեղծվում են Պաշտպավիաքիմի խմբակներ, վորոնց ղեկավարում է բջիջը:

Խմբակը կազմակերպվում է Պաշտպավիաքիմի առնվազն 3 անդամ յեղած ժամանակ:

18. Խմբակի ընդհանուր ժողովն ընտրում է խմբակի կազմակերպչին (խմբկազմակերպիչ), վոր հետագայում հաստատվում է բջիջի նախագահության կողմից: Խմբկազմակերպիչն ընտրվում է 6 ամիս ժամանակով և կատարում է հետևյալ աշխատանքը.

ա) կազմում է խմբակի աշխատանքի որացույցը՝ բջիջի նախագահության և խմբակի ընդհանուր ժողովների վորոշումների ու ցուցումների հիման վրա, և ապահովում է աշխատանքի կատարումը.

բ) աշխատավորներին հավաքագրում է Պաշտպավիաքիմի անդամության մեջ և իր խմբակի անդամներին հաշվառում է կատարում.

գ) ապահովում է խմբակի բոլոր անդամների ներգրավումն Ընկերության աշխատանքի մեջ, վորի համար՝ խմբակի անդամներին ներգրավում է գործնական կազմակերպությունների մեջ (խմբակներ, ուսումնական-շարային ստորաբաժանումներ և այլն), պատասխանատու լինելով նրանց կողմից վարժակայանը և խմբակային պարապմունքները 100 %-ով հաճախելու համար. նրանց ներգրավում է Պաշտպավիաքիմի և տնտեսական-քաղաքական կամպանիաների անցկացնելու մեջ: Խմբակի անդամներին նադրուզկա (բեռնավորում) է տալիս աշխատանքի առանձին տեսակների վերաբերյալ՝ անդամավճարների հավաքարար, հաշվա-

ռու, խմբակային ագիտատոր, ինֆորմատոր, սոցմրցակցության ու հարվածայնության լիդեր և այլն․

գ) կազմակերպում ու ղեկավարում է սոցմրցակցությունն ու հարվածայնությունը խմբակում․

ե) ապահովում է Պաշտպանքիմի գրականության, թերթերի ու ժուռնալների տարածումը․

զ) վերստուգում է անդամավճարների և դրամական հանգանակությունների հավաքարարի աշխատանքը, ապահովում է Պաշտպանքիմի վիճակախաղի տոմսերի իրացումը և այլն․ խմբկազմակերպիչը հաշիվ է տալիս իր գործունեության մասին բջիջի նախագահությանը և խմբակին՝ առնվազն 3 ամիսը 1 անգամ։

## V․ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19․ Պաշտպանքիմի Ընկերության անդամ կարող են լինել միմիայն աշխատավորները, 14 տարեկան հասակին հասնելուց հետո։

Պաշտպանքիմի անդամ չեն կարող լինել․

ա) այն անձնավորությունները, վորոնք զրկված են ընտրական ձայնից՝ սահմանադրության համաձայն, նույնպես և նրանք, ում իրավունքները սահմանափակված են միութենական հանրապետությունների Քրեական կոդեքսով․

բ) սահմանադրության համաձայն, ընտրական ձայնից զրկվածների խնամքի տակ ապրող անձնավորությունները։

20․ Մանուկ-դպրոցականները, վորոնք չեն հասել 14 տարեկան հասակին, կարող են լինել «Պաշտպանքիմի պատանի բարեկամներ»։ 14 տարին լրանալուց



780
31

հետո նրանք փոխադրվում են Ընկերության անդամության մեջ։

21․ Պաշտպանքիմի Ընկերության անդամության մեջ ընդունելությունը տեղի յե ունենում խմբակի ընդհանուր ժողովում, վոր հաստատվում է հետագայում բջիջի նախագահության կողմից։

22․ Ընկերության յուրաքանչյուր անդամ օգտվում է հետևյալ իրավունքներով․

ա) վճռական ձայնի իրավունքով՝ Ընկերության ընդհանուր ժողովներում, վորպես պատգամավոր ուղարկվել Ընկերության կոնֆերանսներն ու համագումարները և ընտրվել նրա բոլոր ղեկավար օրգանների մեջ․

բ) պարտադիր զինվորական ծառայությունն անցնելու և զինվորական ծառայության մտնելու ժամանակ այն արտոնություններով, վոր սահմանված են ԽՍՀՄ ՀՌԽ հրամաններով Պաշտպանքիմի այն անդամների համար, վորոնք անցել են ռազմական պատրաստությունը Ընկերության շարքերում․

գ) Ոչսոավիախիմների, խմբակների, կայանների և Ընկերության ամեն տեսակի այլ կազմակերպությունների անդամության մեջ ընդունվելու իրավունքով․

դ) արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունքով՝ պաշտպանության տներով, ոչսոավիախիմներով, գրադարաններով, թանգարաններով, ցուցահանդեսներով, տիրերով (հրաձգարաններով), ձիամարզարաններով, կայաններով և այլն, վոր կազմակերպվում են Ընկերության կողմից․

ե) Պաշտպանքիմի վոչ անդամների հանդեպ առավելության իրավունքով՝ Ընկերության կողմից կազմակերպվող կուրսերը, դպրոցները, վարժականները

և դպրոցական այլ հիմնարկներ ընդունվելու ժամանակ․

զ) Ընկերության կողմից կազմակերպվող մրցակցություններին ու կոնկուրսներին մասնակցելու իրավունքով․

է) Ընկերության աջակցությունն ստանալու իրավունքով՝ ռազմական, քաղաքացիական, ծովային, ավիացիոն, օդագնացական և քիմիական դպրոցներն ու բուհերը մտնելու ժամանակ (ըստ վորում Ընկերության անդամները պետք է բավարարեն ընդունելության ընդհանուր պայմանները)․

ը) Ընկերության կողմից կազմակերպվող ագիտթռիչքների ժամանակ ինքնաթիռների վրա բարձրանալու իրավունքով․

թ) Ընկերության աջակցությունն ստանալու իրավունքով՝ պաշտպանության բնույթ կրող հետախուզական և գյուտարարական աշխատանքների ժամանակ․

ժ) Պաշտավիաքիմի Ընկերության անդամի համար սահմանված կրծքանշանը, խմբակային և այլ նշանակներն ու տարբերական նշանները, նույնպես և ընկերության համազգեստը կրելու իրավունքով:

Ծանոթություն.—

կերության անդամների ստաժի հաշվառում կատարեն:

23. «Պաշտավիաքիմի Պատանի Բարեկամները» օգտվում են Ընկերության անդամների բոլոր իրավունքներով, բացի § 22 «ա» կետում հիշված իրավունքներից: Ընկերության ժողովներում ու խորհրդակցություններում նրանք օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով:



24. Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է․

ա) բջիջի կազմի մեջ լինել և մասնակցել Ընկերության գործնական աշխատանքին․

բ) անդամատոմս ունենալ և կանոնավոր կերպով ու ժամանակին մուծել անդամավճարները․

գ) դասակարգային գիտակցության օրինակ ծառայել, նվիրված լինել պրոլետարական հեղափոխության գործին և օրինակ ծառայել բարձր աստիճան կարգապահ լինելու, ակտիվ մասնակցություն ունենալ սոցմրցակցության և հարվածայնության մեջ Ընկերության ամբողջ աշխատանքի ընթացքում․

դ) ունենալ ընկերության յուրաքանչյուր անդամի համար ռազմատեխնիկական գիտելիքների պարտադիր մինիմումը և սիստեմատիկորեն դրանց լրացնել․

ե) լինել ակտիվ առաջավոր-հասարակական աշխատող՝ արտադրության մեջ․

զ) ագիտացիա մղել՝ աշխատավորների կողմից Ընկերության մեջ անդամ մտնելու համար․

է) ակտիվորեն աջակցել Ընկերությանը՝ պաշտպանության համար միջոցներ հավաքելու գործում․

Ծանոթություն.— Նվիրատվությունների և դրամական այլ միջոցների հավաքումը Պաշտավիաքիմի անդամների կողմից կատարվում է ամեն անգամ Ընկերության ղեկավար օրգանների և նրա տեղական կազմակերպությունների հատուկ համաձայնությամբ միայն․

ը) զգուշությամբ վերաբերվել զենքին և ուսումնական-նյութական գույքին և ամեն կերպ աջակցել նրա պահելուն ու խնամելուն:

25. Պաշտավիաքիմի Ընկերության անդամն Ընկե-

ության կողմից վտարվում կամ դուրս յեկած է համարվում հետևյալ դեպքերում.

ա) անդամավճարը 6 ամսվա ընթացքում չվճարելու դեպքում.

բ) իրավունակությունը կորցնելու պատճառով (կ. 19).

գ) Ընկերության անդամի կոչումը խայտառակող վորևե արարք գործելու դեպքում.

դ) անդամի պարտականությունները սիստեմատիկորեն խախտելու, ընկերության բջիջի կամ վերադաս ղեկավար օրգանների հանձնարարությունները չկատարելու դեպքում:

Ծանոթություն.— Անդամությունից վտարումը, կատարվում է բջիջի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության անդամությունից վտարվածին իրավունք է վերապահվում բողոքարկել Ընկերության վերադաս օրգաններին:

26. Պաշտավիաքիմի Ընկերության անդամները՝ ինչպես Ընկերության կողմից դուրս յեկածները, այնպես էլ նրանից վտարվածները՝ կորցնում են ընկերության անդամների բոլոր իրավունքները, ընկերության անդամության նշանակը, տարբերական նշաններն ու համազգեստը կրելու իրավունքը, և իրավունք չունեն պահանջել իրենց կողմից Ընկերությանը մուծած անդամավճարները:

## VI. ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ

27. Անդամավճարը տարեկան է. չափը սահմանվում է՝ ԽՍՀՄ-ի Պաշտավիաքիմի Միության Համամիութենական համագումարի կամ Կենտրոնական



Խորհրդի պլենումի վորոշումով, հաշվի առնելով Ընկերության անդամի նյութական ապահովությունը:

Անդամավճարը մուծվում է յեռամսյակներով, յուրաքանչյուր յեռամսյակի առաջին ամսի 15-ից վոչ ուշ:

28. Անդամատոմսեր տալը կատարվում է մուտքի վճարը և ընթացիկ յեռամսյակի անդամավճարը մուծելուց հետո:

## VII. ԲՋՋԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

29. Բջիջի կողմից հավաքած բոլոր միջոցները կենտրոնացվում են բջիջի նախագահության մոտ, ըստ վորում.

ա) մուտքի վճարներից ստացված գումարների 50 տոկոսը, տարեկան անդամավճարների 65 %, «գազպաշտպանություն»-ից ստացված մաքուր յեկամտի 30 %-ը և վիճակախաղի իրացումից ստացվածի 88 %-ը հանձնվում են Պաշտավիաքիմի Շրջքաղխորհրդին: Մնացած գումարները ծախսվում են Պաշտավիաքիմի Շրջքաղխորհրդի կողմից, հաստատված նախահաշվի համաձայն, բջիջի գործնական աշխատանքի համար.

բ) Համամիութենական նշանակություն ունեցող նպատակային հանգանակություններից, կամպանիաներից, նվիրատվություններից ստացված միջոցներն ամբողջովին հանձնվում են Պաշտավիաքիմի Շրջքաղխորհրդին, յեթե վերադաս կազմակերպությունների կողմից պահելու վորոշ տոկոս չի սահմանվել բջիջի Խորհրդի կազմակերպչական ծախսերի համար:

## VIII․ ԲՋԻՋԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

30․ Բջիջը յենթարկվում է լիկվիդացիայի այն դեպքում, յերբ լիկվիդացիայի յե յենթարկվում հիմնարկությունը, վորին կից գտնվում է բջիջը․

31․ Ընկերության մնացած ամբողջ գույքը, դրամական միջոցները և մյուս արժեքները նախագահությունը կամ հատուկ նշանակված լիկվիդացիոն հանձնաժողովը, ցուցակի համաձայն, հանձնում է Պաշտավիաքիմի Շրջխորհրդին։



## ԲՋԻՋՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ (ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՄՏԿ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՅԼՆ) ՊԱՇՏ-ԱՎԻԱՔԻՄԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ

1․ Խոշոր ֆաբրիկա-գործարանային ձեռնարկություններում, նորակառույցներում, խորհտնտեսություններում, ՄՏԿ, խոշոր կոլտնտեսություններում և այլն, վորտեղ հասարակական կազմակերպությունները այնպիսի ղեկավարման օրգաններ ունեն, վորոնք միացնում են այդ կազմակերպությունների բազմաթիվ առանձին բջիջները, նույնպես և ԲՊԿԲ ցեղում և նրան հավասար ընկերական միավորություններում ստեղծվում են Պաշտավիաքիմի խորհուրդներ, վորոնք միացնում են այդ ձեռնարկության և այլն Պաշտավիաքիմի բջիջների գործունեությունը։ Բոլոր [illegible] կազմակերպության կառուցման համար կիրառվում է վոչ [illegible] խորհուրդ (ձեռնարկությունների, խորհտնտեսությունների, [illegible] հիմնարկների և այլն), բջիջ (ցեխերում, [illegible] և այլն) և խումբ ([illegible] և այլն) [illegible]

ա) ՄՏԿ կից միավորվում են [illegible]

[illegible] ՄՏԿ-ի [illegible]

մեջ սպասարկվող ամենամոտիկ կոլտնտեսությունների Պաշտավիաքիմի բջիջները

բ) խորհտնտեսություններին կից՝ խորհտնտեսության բաժանմունքների բջիջները, մոտակա կոլտնտեսությունների բջիջները, վոր արտադրական տեսակետից սպասարկում են տվյալ խորհտնտեսությունը, և մոտակա տերիտորիալ բջիջները.

գ) խոշոր խորհտնտեսություններին կից խորհուրդները միացնում են տվյալ խորհտնտեսության բրիգադների բջիջները և բջիջի ամենամոտիկ տերիտորիալ ձեռնարկությունները.

Տերիտորիալ բջիջների կցումը ՄՏԿ-ի, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների Պաշտավիաքիմի խորհուրդներին կատարվում է Պաշտավիաքիմի շրջանային խորհրդի վորոշմամբ:

2. Պաշտավիաքիմի խորհուրդներն ընտրվում են Պաշտավիաքիմի խորհրդի կողմից ընդգրկվող բջիջների անդամների կոնֆերանսում: Ներկայացուցչության նորմաները սահմանում է շրջանային խորհուրդը:

Կոնֆերանսը, վորպես կանոն, հրավիրվում է տարին մեկ անգամ:

Կոնֆերանսի իրավասության շրջանակի մեջ մըտնում են՝ խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումների և հաշվետվությունների քննությունը, աշխատանքի հերթական խնդիրների վորոշումը և խորհրդի ու վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունները: Կոնֆերանսն իրավազոր է հանդիսանում, կոնֆերանսի համար ընտրված պատգամավորների առնըվազն 2/3 առկայության դեպքում:

3. Խորհրդի անդամների քանակն ընտրվում է Պաշտավիաքիմի շրջանային խորհրդի համաձայնությամբ, սակայն, վորպես կանոն, 25 մարդուց վոչ ավելի, իսկ վերստուգիչ հանձնաժողովի անդամների քանակը՝ Պաշտավիաքիմի շրջանային վերստուգիչ հանձնաժողովի համաձայնությամբ, բայց 5 մարդուց վոչ ավելի:



4. Խորհրդի պլենումները հրավիրվում են խորհրդի նախագահության կողմից 3 ամիսը մեկ անգամ:

5. Բջիջների և սեկտորների առօրյա աշխատանքների ղեկավարությունն իրականացվում է խորհրդի նախագահության կողմից, վորն ընտրվում է, վորպես կանոն, 9 մարդուց վոչ ավելի:

6. Նախագահությունն անց է կացնում աշխատանքը սույն «Կանոնադրքի» 10, 11, 12, 13, 14, 15 և 16 կետերի համեմատ:

7. Եթե ձեռնարկության, խորհտնտեսության, ՄՏԿ, կոլտնտեսության մեջ կազմակերպված է Պաշտավիաքիմի խորհուրդը, ապա բոլոր միջոցները, վոր հասնում են այդ խորհրդի կողմից ընդգրկվող բջիջներին, 29 կետի համաձայն, կենտրոնացվում են խորհրդի նախագահության դրամարկղում, վորն այդ միջոցներով ապահովում է Պաշտավիաքիմի բջիջների, նույնպես և համագործարանային (խորհտնտեսային, կոլտնտեսային և այլն) մասշտաբի գործնական ձեռնարկությունների պրակտիկ [illegible] անցկացնելը:

Гос. Публ. Биб.

9435

## ՑԱՆԿ


| | | Եջ |
|---|---|---|
| I | Ընդհանուր դրություն | 3 |
| II | Բջիջի խնդիրները | 3 |
| III | Բջիջի կազմակերպչական կառուցվածքը | 6 |
| IV | Խմբակ և խմբակային կազմակերպիչ | 15 |
| V | Անդամների իրավունքներն ու պարտականությունները | 16 |
| VI | Անդամավճարի մասին | 20 |
| VII | Բջիջի միջոցները | 21 |
| VIII | Բջիջի լիկվիդացիան | 22 |

---

Ձեռնարկության Պաշավիաքիմի խորհուրդների ղեկավարության տակ բջիջների միացումը . . 23


---

ՀՀ Ազգային գրադարան
NL0217969

40.861

ԳԻՆԸ 30 Կ.

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

Устав ячейки Осоавиахима

Госиздат 1932 Эривань